



103. ՄԱՐԴ ԶԵՍ, ՄԱՐԴ ԶԵՍ ԴԱՌՆԱ

Շատ հնրմ, դեռ նիկոլից էլ աղաք, գեղացի մարթի մինը մի տղա յա ունենրմ: էս տղեն թոգից փախածի մինն ա ըլրմ՝ ոչ ըշխատրմ ա, ոչ էլ տանը մի օքուտ ա տալի: Մի խոսքով, սալախանի մինը: Հերն ա խրատրմ, բան չի ղու:ս գալի: Ընավողվանից, լիսը բաց ըլելու հետ, մինչի բիգու հնգորտանց հետ հաղ ա անրմ:

Դրա հըմար էլ հերը տղին ասըմ ա.— Մարթ չես, մարթ չես դառնա:

էս խոսքը ամեն հետ տղի ըրեսին շըպպացընրմ ա: Դե ինքը ըշխատող մարդ, սիրտը դիմանըմ չի, մտածըմ ա, որ ըսօր իրա ձեռ ու ոտը սաղ ա, հա՛մ իրան ա պահըմ, հա՛մ էլ կնդանն ու տղին, էքուց-էլոր, տր ձեռ ու ոտից ընգնի, իրանց հալը ո՞նց կըլի:

Մի օր էլ, եփ հերը տղի գլխին ամեն հետվա խրատն ա կարդալիս ըլրմ, տղին ասըմ ա. «Մարթ չես, մարթ չես դառնա», էս բեգովլաթը թողըմ ա տունն ու գլուխն առնըմ, կորչըմ ա:

Տանիցը հեռանալուն եղը, էս տղեն սալախանի պես դես ա ման գալի, դեն ա ման գալի, վերչը մի առուտորականի ա ոաստ գալի: Դրա կշտին ծառայության ա մտնըմ ու, արի ու տես, բախտը բանըմ ա: Ինքն էլ ըոյով-բուսաթով, սիրուն տղա յա ըլրմ, առուտորականին դիր ա գալի ու մի էրկու տարուց եղը դառնըմ ա հարուստ առուտորական: Ըստի են ասել. «Բախտը խելքի աղաքն ա ընգնըմ»:

Քե ոնց ա պատահում, էս տղեն առուտուրի վախտը մի իշխանի ա ուստ գալի: Իշխանը մտածում ա, որ ռէսա ոտս գերեզմանումն ա, աղջիկս էլ հասած աղջիկ ա, սա էլ սիրուն, բոյով-բուսաթով, դոշաղ տղա յա, փեսա կանեմ, ինձանից եղը օջախս կծր-խացնի»:

Քհենց էլ անում ա: Քոռին էլ ինչ ա պետք, էրկու աչքի լիս:

Մի սիրուն օր էլ տղեն իշխանի ախշկանը ուղում ա: Աչքդ բարին տենա, ինչ նա տենում ա: Զուր տեղը չեն ասել. «Գիժը գնաց հըրսանիք, ասավ՝ ըստի լավ ա, քանց մեր տանը»:

Իշխանի փեսա յա դառնում ու իրա հմար քեփ ա քաշում:

Մի քանի տարուց եղը իշխանը մեռնում ա, տղեն նստում ա իշխան ու ամբողջ հարստութիւնին տեր դառնում:

Օրերից մի օր էլ էս մեր իշխանը հորն ու մորը միտն ա գծում: Իրա ծառաներից մնին ղրգում ա նրանց եղնա, թե.— Իշխանը հրամայել ա, որ իրա կուշտը գնաք:

Տղի ծնողնին արդեն պռաված են ըլում, ոտից ձեռից ընգած: Զաննեըը դող ա ընգնում, հենց որ հրամանը լսում են:

Մտածում են, թե, ախպեր, էս ի՞նչ բան ա, որ իշխանն իրանց կանչում ա, մնին մի գեշ բան չեն արել, մնի հավին քար չեն գծել, մնին վարդով շոռ չեն ասել:

է, ինչ տեն իմանալ, որ իրանց բեղովաթը իշխան ա դառել, նա յա կանչում: Ահ ու դողով ճամփա են ընգնում: Գնում են հասնում իշխանի պալատը:

Մառաներից մինը նրանց տանում ա դուզ իշխանի կուշտը: էդ պառավնին գլուխ են տալի իշխանին ու ճամփա պահում, թե նա ինչ ա հրամայելու, մի կոնից վախում են, մի կոնից էլ պել կտրում, պալատի ոսկին ու էրծաթը հենց որ տենում են:

Մին էլ իշխանը հարցնում ա.— Բիձա՛, ինձ ճնանչում ե՞ս:

Հերը պատասխանում ա.— Զէ, պարոն իշխան ջան, անըմդ լսել ի, համա քեզ տեհել չի:

Գե խեղճը ոնց տեր ճնանչի, պռավել էր ու շալկով էր ման գալի, աչքերը պոշացել ին, կնիկն էլ՝ իրա օրին:

— Ա հեր, քու տղեն եմ, բա ասում իր՝ մարթ չես, մարթ չես դառնա՛:

Տղի էս խոսքերի վրա մոր ուղքը գնում ա, դե ինչքան չլի, մոր սիրտ ա, կարոտիցը դիմանում չի:

Հերը հանգիստ պատասխանում ա.— Հլեդ ասում եմ, որ մարդ չես, մարդ չես դառնա:

Տղեն ձեռաց վրա յա ընկաւ.— Ա՛, հեր, իշխան եմ, մենձ հարստութիւնի տեր եմ դառել, կնիկս էլ իշխանական տոհմից ա:

Հերը դրան պատասխանում ա.— Տղա շան, իշխան ես, համա մարդ չես:

Տղեն դրամացած հարցնում ա, թե.— Ընչի՞:

Հերը քո գիդեցածի պես դրան մի լավ նալում ա:

— Այ որդի՛, բա որ մարդ ըլեիր,— ասում ա հերը,— էս պառավ հալով ծնողներիդ ոտով հասցնիլ չիր ըստի, այլ ինքդ կդեիր, մի հատ էլ կառեթ կբերեիր, մեզ կնստացնեիր, ու առք-փառք կբերեիր հարսիս ու թոռներիս կուշտը, կարքին ղոնախլըղ կանեիր, ես էլ կտենայի, որ մարդ ես դառել, մորդ հետ կուրխանեի: Զէ՛, բալա շան, մարդ չես, մարդ չես դառնա:

Ասում ա ու պառավի հետ դուս դալի պալատից: Խեղճերը լաց ըլելով գնում են իրանց արևի ձենն ածեն, բեդովլաթ տղի լեզուն էլ պապանձվում ա, թե հորն ու մորը տուն կանչի:

Աստված շանի, որ ձեզ էլ սհենց զավակ պատահի, ամեն բանի վերջը մարդկութիւնն ա:

